2/26.11/58

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0004-21

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***«Արմավիր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 15 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 0004-21

<<12>> 01 2021թ.

Արմավիրի մարզի «Արմավիր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմադրութային փաստաթուղթ. - ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Մշակումները կատարվել են պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր ՈՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9-1 շրջանակներում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Նախագծերի մշակման համար որպես ելակետային նյութեր և տվյալներ հիմք են հանդիսացել.

- տարածքի Մ1:10000 մասշտաբի տեղագրական հանույթները,
- համայնքների տարածքի կադաստրային քարտեզները:

Համայնքների հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվեկշիռ «Ձև 22» ձեռք են բերված ՀՀ անշարժ գույքի կադաստրի, իսկ համայնքների քառամյա զարգացման ծրագրերը՝ ՀՀ Արմավիրի մարզի կայքէջերից:

Նկարագրական մաս. «Արմավիր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման (այսուհետ «Արմավիր-3» ՄՄՀՏՊՓ) նախագիծը քաղաքաշինական ծրագրային՝ տարածական պլանավորման փաստաթղթի նոր տեսակ է, որը համադրում է միկրոռեգիոնալ և տեղական մակարդակները և որում համատեղվում են տարածքային հատակագծման նախագծի, գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի վերաբերյալ՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.4-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված պահանջները: Այն մշակվում է միկրոռեգիոնալ միավորի սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ, կանոնակարգելով ինչպես տեղական, այնպես էլ միկրոռեգիոնալ միավորների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարածական զարգացման խնդիրները:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը՝ հետևյալ կետերով.

- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգը երկարաժամկետ հեռանկարում,
- բնակավայրերի գործող և կանխատեսվող տնտեսական (գյուղատնտեսական, զբոսաշրջային, արդյունաբերական, մշակութային, գիտատար) մասնագիտացումները,
- տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքների և օբյեկտների տեղաբաշխման ուրվագիծը,
- սոցիալական օբյեկտների առկա և կանխատեսելի տեղաբաշխման ուրվագծերը,
- ինժեներական նախապատրաստման, տարածքների և բնակչության պաշտպանության բարձրացմանն ուղղված ծրագրերը,
- տարածաշրջանի զարգացման ներդրումային ծրագրերը:

«Արմավիր-3» միկրոռեգիոնալ տարածքում ներառված են Արմավիր և Մեծամոր քաղաքները, ինչպես նաև Այգեվան, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Նորավան և Սարդարապատ համայնքները, որոնք դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված միկրոռեգիոնալ մակարդակի տարածական միավորներ, միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորներ՝ համայնքներ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջարկություններ:

Արմավիրի մարզը կազմավորվել է 1995թ.-ին և գտնվում է ՀՀ-ի տարածքի արևմտյան մասի հարավային հատվածում: Այն զբաղեցնում է ՀՀ տարածքի մոտ 4.2% կամ 1242.0կմ^2 մակերես, իր մեջ ընդգրկելով Արմավիրի, Էջմիածնի և Բաղրամյանի տարածաշրջանները: Սահմանակից է Երևանին (արևելքում), Արագածոտնի (հյուսիսում), Արարատի (հարավ-արևելքում) մարզերին: Հարավ-արևմուտքում և հարավում Արմավիրի մարզը ՀՀ պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

ՀՀ Արմավիրի մարզը բնակչության թվով և խտությամբ զիջում է միայն Երևան քաղաքին: Մարզի բնակչությունը 266 հազ. մարդ է, որը կազմում է հանրապետության բնակչության 8.9%-ը:

Մարզի երեք՝ Արմավիր, Էջմիածին և Մեծամոր, քաղաքների բնակչությունը միասին կազմում է 84.6 հազ. մարդ կամ մարզի բնակչության 31.7%: Գյուղական բնակչությունը կազմում է 181.8 հազար մարդ կամ մարզի բնակչության 68.2%:

Մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր Ակնա լիճը, որը զբաղեցնում է 50.0հա մակերես, հատակը ձագարաձև է և ունի ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը) իր միակ Քասախ վտակով: Ջրային ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորերկրյա ջրային ռեսուրսներով:

Ռելիեֆը տափարակ, գետալճային, չոր նստվածքներից կազմված, տեղ-տեղ ալիքավոր մակերևույթով տարածք է: Ծովի մակարդակից բարձրությունը՝ 800-1000մ: Կլիման խիստ ցամաքային է:

Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան հարթավայրի բարեբեր հողերում: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 97.0հազ.հա-ից ավելի տարածք, կամ մարզի վարչական տարածքի 78.2%, գյուղատնտեսական նշանակության հողերի 63.5%-ը ոռոգելի հողեր են: Չմշակվող հողերը կազմում են 13.0հազ.հա-ից ավելի տարածք, որից աղակալած է շուրջ 3.0հազ.հա-ից ավելի տարածք կամ չմշակվող հողերի 22.6%-ը և գտնվում են մարզի մերձարաքսյան ենթագոտում՝ «Արմավիր-3» տարածքից դուրս:

Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Արմավիրի մարզում բնական ծագման անտառածածկ տարածքներ չկան և հարուստ չէ օգտակար հանածոներով: Տարածքում առկա են տուֆի ու բազալտի քարերի, ավազի, խճի, ավազակոպճային խառնուրդի, գիպսի հանածոների թվով 42 հանքավայրեր, որոնից 12-ը չեն շահագործվում:

Հանրապետությունում միակ «Որդան Կարմիր» արգելավայրը գտնվում է Արազափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում՝ զբաղեցնելով 219.85հա տարածք: Այն ՀՀ-ում էնդեմիկ արժեքավոր՝ որդան կարմիր միջատի և նրա սնման օբյեկտ հանդիսացող որդանախոտի հատուկ պահպանության օբյեկտ է և դուրս է «Արմավիր-3» ՄՄՀՏՊ տարածքից:

«Արմավիր-3» միկրոռեգիոնն ընդգրկող տարածքը կազմում է 11664.47հա և գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի կենտրոնական մասում, որտեղ տեղակայված են մարզկենտրոն Արմավիրը, Մեծամոր քաղաքը և ՀԱԷԿ-ը:

«Արմավիր-3»-ի կազմում ներառված է 10 բնակավայր, որոնց յուրաքանչյուրի զբաղեցրած տարածքը էապես տարբեր է անկախ նրանից՝ քաղաք է, թե գյուղ: Այսպեսով բնակավայրերի հողերի 2321.21հա ամբողջ տարածքը բաշխվում է հետևյալ կերպ՝ ըստ մեծության / հա /.

Արմավիր քաղաք	851.55
Մեծամոր քաղաք	165.08
Այգեվան գյուղ	73.34
Լենուղի գյուղ	78.11
Լուկաշին գյուղ	198.42
Նորավան գյուղ	91.22
Խանջյան գյուղ	119.81
Հացիկ գյուղ	135.35
Մայիսյան գյուղ	304.28
Սարդարապատ գյուղ	304.05

Տարածքը կազմում է 11664.47հա, ներառելով երկու՝ Արմավիր և Մեծամոր քաղաքները և ութ՝ Այգեվան, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Նորավան, Սարդարապատ, գյուղերը /համայնքներ/:

Արմավիր (նախկին Հոկտեմբերյան) քաղաքը հիմնադրվել է 1931թ. հունիսի 26-ին և զբաղեցնում է 2181.99հա տարածք: Այն գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան մասում, Երևանից 48.0կմ հեռավորության վրա և հանդիսանում է ՀՀ Արմավիրի մարզկենտրոն: Արմավիր քաղաքով են անցնում Երևան-Արմավիր-Թուրքիայի պետական սահման միջպետական Ա-5, Արմավիր-Իսահակյան-Գյումրի հանրապետական Հ-17 նշանակության ավտոճանապարհները և Երևան-Այրում-Վրաստան երկաթգիծը: Համայնքում առկա են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք կամ չեն գործում կամ գործում են իրենց երբեմնի արտադրական չնչին հզորություններով, դրանք են պահածոների գործարանը, ռելեի գործարանը, ֆուրնիտուրայի գործարանը, հաստոցաշինական գործարանը, հացի և հրուշակեղենի գործարանը և կահույքի ֆաբրիկան:

Քաղաքի բնակչության թիվը կազմում է 37.50 հազ.մարդ:

Համայնքում գործում են 9 հանրակրթական դպրոցներ, 2 տարածաշրջանային քոլեջներ, մեկ արվեստի դպրոց, մեկ արվեստի պետական քոլեջ, մեկ երաժշտական դպրոց, երեք մարզադպրոց: Համայնքում գործում է նաև գրադարանային համակարգ:

Համայնքում գործում են երկու պետական բժշկական հաստատություն: Մշակութային հաստատություններից գործում է Արմավիրի մշակույթի տունը: Մարզական հաստատություններից՝ Սպորտ դպրոցը: Հոգևոր կառույցներից սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին:

Արմավիր քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, մայթերի ընդհանուր մակերեսը կազմում է 73.950հազ.մ^2: Քաղաքի տարածքից օրական հավաքվում և աղբավայր է տեղափոխվում 32.0տ աղբ:

Քաղաքի աղբահանության և սանմաքրման աշխատանքները իրականացվում են «Բարեկարգում» տնօրինության կողմից: Աղբավայրը գտնվում է քաղաքի հյուսիս-արևելյան մասում 1.3կմ հեռավորության վրա, որտեղ տարեկան տեղափոխվում է 9216.0տ կենցաղային աղբ: Այն զբաղեցնում է մոտ 8.0հա տարածք: Աղբավայրը չի համապատասխանում տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և հանդիսանում է զուտ աղբի կուտակման վայր:

Համաձայն «Արմավիր համայնքի 2019-2023 թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի» Արմավիրում առկա են արդյունաբերական և վերամշակող ձեռնարկություններ և արտադրական տարածքներ, որոնց վերագործարկումը կնպաստի քաղաքի զարգացմանը, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, կրթական և մշակութային կյանքի ակտիվացմանը, տուրիզմի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Մեծամորը քաղաքային համայնքը հիմնադրվել է 1969թ.-ին որպես Հայկական ատոմային կայանի /ՀԱԷԿ/ բնակելի ավան, 1972թ.-ից կազմավորվել է որպես քաղաքատիպ ավան, 1995թ-ից՝ քաղաք: Համայնքը գտնվում է Արմավիրի տարածաշրջանի արևմտյան հատվածում, Երևան քաղաքից 38.0կմ, իսկ մարզկենտրոնից 8.0կմ հեռավորության վրա: Քաղաքում բնակվում է շուրջ 12.280 հազ.մարդ:

Մեծամոր համայնքի վարչական տարածքը կազմում է 910,79հա, որից 715.0հա անջրդի ու աղակալած, չմշակվող գյուղատնտեսական նշանակության այլ հողեր են: Համայնքը սահմանակից է Մայիսյան, Մրգաշատ և Ակնալիճ համայնքներին:

Համայնքը նշանավոր է ՀՀ ատոմային էլեկտրակայանով /ներկա անվանումը՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ /, որը զբաղեցնում է 300.0հա տարածք, որտեղ աշխատում են համայնքի բնակիչների գլխավոր մասը: Հայաստանում գործող ատոմակայանը, որը միակն է Հարավային Կովկասում, գտնվում

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ԵՐԵՎԱՆ «ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՀԾՀ 02343163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

է Երևանից մոտ 28.0կմ արևմուտք՝ Մեծամոր քաղաքի մոտակայքում, Մայիսյան համայնքի վարչական տարածքում:

Քաղաքում կան նաև սննդի արդյունաբերության մի շարք փոքր ձեռնարկություններ: Արտադրական ձեռնարկություններից քաղաքում գործում է հացի արտադրամաս: Օգտակար հանածոներ չկան: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ բնակավայրի սահմաններում չկան: Շրջակայքում կան բրոնզե և երկաթէ դարերի բնակատեղիների մնացորդներ: Հոգևոր կառույցներից գործում է «Սուրբ Ղազար» եկեղեցին:

Բնակավայրի հողերի մոտ 14% տնամերձ հողամասեր են: Դրանք բնակչության կողմից օգտագործվում են որպես բանջարանոցներ, պտղատու և խաղողի այգիներ:

Այգևան համայնքը հիմնադրվել է 1946թ. Հացիկ անվանումով, այնուհետև վերանվանվել է Շահումյան, 10-րդ սովխոզ, Ձերժինսկի:

Համայնքը գտնվում է Երևանից 54.0կմ, մարզկենտրոնից 8.0կմ հեռավորության վրա: Սահմանակից է Հացիկ, Սարդարապատ և Լենուղի համայնքներին: Համայնքն ունի 621.39հա վարչական տարածք՝ թվով 1.667հազ.մարդ բնակչության, զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ, անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը, պտղատու և խաղողի այգիները: Պետական հողերը հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Արմավիրի Մայր ջրանցքի ջրերով:

Համայնքում գործում է մեկ ամբուլատորիա /կոլեկտիվը՝ 4 հոգի/: Մշակութային, մարզական հաստատություններ և հոգևոր կառույցներ չկան: Օգտակար հանածոներ և պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան:

Լենուղի գյուղը հիմնադրվել է 1928թ.-ին, գտնվում է Միջինարաքսյան հարթավայրում: Համայնքի մակերեսը կազմում է 785.91հա, այն գտնվում է Երևանից 50.0կմ, իսկ մարզկենտրոնից՝ 10.0կմ, իսկ պետական սահմանից՝ 35.0կմ հեռավորության վրա: Նախկինում կոչվել է հոկտեմբերյանի շրջանի Ստալինի անվան սովխոզ, այնուհետև № 6 սովխոզ: Գյուղն ունի 1725 բնակիչ, որոնց նախնիների մի մասը տեղափոխվել են Արևմտյան Հայաստանի Գանի, Բայազետի, Արճեշի, Ալաշկերտի շրջաններից, Պարսկաստանից, Սիրիայից, Հունաստանից և Զավախքից: Բնակչությունը հիմնականում զբաղվում է պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Լենուղու տարածաշրջանը բաժանվում է հողային երկու զոտու Մերձարաքսյան և Ուրծ-Կոտայք-Շամիրամյան: Գյուղական նշանակության հողերը բնականից հումուսով աղքատ լինելու պատճառով 1-2 տարի չմշակելու ղեպքում շատ արագ ենթարկվում են կլիմայական գործոնների ազդեցությանը և շարքից ղուրս գալիս: Երկու գոտիների հողատարածություններն էլ գրեթե ամբողջությամբ ոռոգվում են Մայր առու կոչվող ջրատարից ինքնահոս եղանակով, միայն 10.0հա-ն է, որ ոռոգվում մեխանիկական եղանակով: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը, պտղատու և խաղողի այգիները: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ (ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի արտադրությամբ), խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան: Համայնքում գործում է 1 առողջության կենտրոն:

Լուկաշին համայնքը հնագույն բնակավայր է և հիմնադրվել է 1922թ.-ին, որը մայրաքաղաքից գտնվում է 50.0կմ, իսկ մարզկենտրոնից դեպի արևմուտք՝ 5.0կմ հեռավորության վրա: Գյուղի բնակչությունը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության Ախուրյանի, Ապարանի, Գորիսի, Թալինի շրջաններից, ապա

ЕЗРАКАЦУТЮН
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Լիբանանից, Սիրիայից, Իրանից: Համայնքը ունեցել է մի քանի անուններ՝ Լուկաշեն, Կարմիր բանակային, Նալբանդյան, N 3 Սովխոզ: Այն սահմանակից է Նորավան և Խանջյան համայնքներին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1036,39հա, իսկ բնակչության թիվը՝ 2.613 հազ.մարդ:

Ձմռանը ճանապարհները չեն փակվում: Տարածքով գետ չի հոսում, հաճախակի են չորային ամառները, իսկ գարնանային վարար անձրևների հետևանքով մեծանում են սողանքները և սելավները:

Համայնքում զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն դրա զարգացման համար համայնքում արոտավայրեր չկան, այդ պատճառով համայնքի բնակչությունը ստիպված է լինում անասուններին տեղափոխել Ամասիայի տարածաշրջանի արոտավայրեր: Զբաղվում են նաև թռչնապահությամբ և մեղվապահությամբ: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում և սեփականաշնորհված վարելահողերում աճեցնում և մշակում են կարտոֆիլ, հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման և վաճառքի համար: Բնակիչներն ունեն նաև սեփականաշնորհված խաղողի և պտղատու այգիներ:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ներկայացված են նորահայտ վեց հուշարձաններով՝ գյուղի եզրին քարքարոտ ու կառուցապատված տեղանքում գտնվող ք.ա.1 հազարամյակի դամբարանադաշտով:

Համայնում գործում է բուժամբուլատորիա: Առկա է շինարարությունում երեսապատման համար օգտագործվող տուֆի հանքեր:

Նորավան համայնքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասուի նախալեռնային՝ Մերձարաքսյան և Ուրց-Կոտայք-Շամիրամ, գոտիներում, մարզկենտրոնից 3.0կմ, իսկ մայրաքաղաքից՝ 45.0կմ հեռավորության վրա: Ունի 413,52հա հողատարածք: Բնակչությունը ձևավորվել է Լուկաշին սովխոզի բնակիչներից, այլ շրջաններից և Իրանից տեղափոխված բնակիչներից: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Համայնքը չի ունեցել հասարակական և արտադրական ոչ մի շինություն:

Համայնքում չի գործում մանկապարտեզ, մշակույթի տուն և սպորտային կառույցներ՝ համապատասխան շինությունների բացակայության պատճառով:

Համայնքում խաղողագործությունը և պտղաբուծությունը զարգացման միտում ունեն: Աճում է նաև ջերմոցային տնտեսությունների թիվը:

Խանջյան համայնքը հիմնադրվել է 1958թ.-ին, տեղակայված է Արարատյան դաշտի հյուսիս-արևմտյան մասում, վարչական տարածքը կազմում է 782.28հա: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 7.0կմ է, իսկ Երևանից՝ 50.0կմ:

Համայնքի բնակչության թիվը՝ 2.084 մարդ: Համայնքն ունի պտղախաղողագործական ուղղություն, զարգացած բանջարաբուծությամբ, անասնապահությամբ: Համայնքում շուրջ 250 ընտանիք զբաղվում են անասնապահությամբ և որից ստանում են բարձր եկամուտ: Շնորհիվ ոռոգման ջրի բավարար առկայության համայնքն ապահովված է նաև կերային բազան:

Համայնքի նախադպրոցական հաստատությունը չի գործում շենքի վթարային վիճակում գտնվելու պատճառով: Համայնքում գործող ամբուլատորիան հնարավորինս պատշաճ կազմակերպում է առողջապահական խնդիրներ ունեցող բնակիչների բուժսպասարկումը:

Հացիկ համայնքը գտնվում է տարածաշրջանի Մերձարաքսյան հողային գոտում: Հացիկ համայնքում ապրում են 2431 բնակիչ: Համայնքի հողատարածությունների ոռոգումն իրականացվում է Մայր առու կոչվող ջրատարից ամբողջությամբ ինքնահոս եղանակով, բացի 80.0հա-ից, որն ոռոգվում է մեխանիկական եղանակով: Բնակչությունը զբաղվում է

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

այգեգործությամբ (ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի արտադրությամբ), խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ:

Հացիկ համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց: Համայնքի բնակչության մոտ 10% ունի բարձրագույն կրթություն: Համայնքում գործում է 1 բուժամբուլատորիա, որը գտնվում է գյուղապետարանի շենքի առաջին հարկում:

Մայիսյան համայնքը գտնվում է Ուրց-Կոտայք-Շամիրամ գոտում, մարզի կենտրոնական մասի նախալեռնային գոտում: Մարզկենտրոնից 7.0կմ, իսկ մայրաքաղաքից՝ 40.0կմ հեռավորության վրա:

Մայիսյան համայնք աշխատելու և բնակվելու նպատակով Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից, ինչպես նաև Իրանից, Վրաստանի և Ադրբեջանի հայաբնակ վայրերից:

Համայնքն ունի համայնքապետարան, մշակույթի տուն, գրադարան, երկհարկանի դպրոց, մանկապարտեզ, փոստային բաժանմունք, բուժական ամբուլատորիա: Համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է Արմավիր քաղաքին: Համայնքը հիմնականում գազաֆիկացված է:

2005թ. «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստան» ծրագրով և համայնքապետարանի 10% համաֆինանսավորմամբ, համայնքում վերակառուցվել է 4.0կմ երկարությամբ ոռոգման ջրատարը, մաքրվել է 5.0կմ երկարությամբ հողային հունով ջրատար: Համայնքի խմելու ջուրը սպասարկվում է «Նոր Ակունք» ՓԲԸ կողմից: Խմելու ջրի և ջրագծերի սպասարկման աշխատանքների որոշ մասը կատարվում է համայնքի բյուջեի հաշվին:

Համայնքն ունի համայնքապետարան, մշակույթի տուն, գրադարան, երկհարկանի դպրոց, մանկապարտեզ, փոստ, բուժական ամբուլատորիա: Մանկապարտեզը չի գործում, մշակույթի տանը գործում են պարային, սպորտային խմբեր:

Համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է Արմավիր քաղաքին՝ հեռավորությունը 7.0կմ: Համայնքի բնակիչների հասարակական տրանսպորտի սպասարկումը կատարվում է Արմավիր քաղաքից՝ երթուղային միկրոավտոբուսների միջոցով:

Սարդարապատ համայնքը (մինչև 2004թ.-ը՝ Հոկտեմբեր), հիմնադրվել է՝ 1819թ.: Այն գտնվում է Երևանից 51.0կմ, իսկ մարզկենտրոնից 5.0կմ հեռավորության վրա: Համայնքի բնակչության թիվը կազմում է 5829 մարդ:

Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է Սուրբ Աստվածածին եկեղեցին (19-րդ դար):

Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ: Այժմ համայնքում գործում են մրգի վերամշակման չորս ձեռնարկություններ, մեկ խոշոր ջերմոցային տնտեսություն, անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են հացի, հացամթերքի արտադրությամբ: Գործունեության բնագավառներն են՝ կաթնամթերք, հացամթերք, փայտամշակման, դռների և պատուհանների արտադրություն:

Արմավիրի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց: Մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 613.0կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 123.0կմ, հանրապետական նշանակության՝ 91.6կմ: Բնակչության 99%-ը ապահովված է մշտական երթուղային ավտոտրանսպորտային կապով: Մարզի տարածքով է անցնում «Հարավկովկասյան երկաթուղու» 70.0կմ երկարությամբ հատվածը: Առկա է տեղական նշանակության 35.0կմ երկարությամբ երկաթուղի, որից գործում է Արմավիր-ՀԱԷԿ 12.0կմ երկարության հատվածը:

Մարզի բոլոր բնակավայրերը ապահովված են խմելու ջրով: Քաղաքները ունեն կեղտաջրերի հեռացման համակարգ /կոյուղի/, որոնց մաքրման կայանները կարիք ունեն

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

արմատական նորոգման և վերագործարկման:

Էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը իրականացվում է համապատասխան ծառայությունների կողմից: Բնակավայրերի տարածքի սանիտարական մաքրումը կատարվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Աղբի կուտակման, վնասազերծման, վերամշակման խնդիրները ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարիք ունեն:

«Արմավիր-3» տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի ամենախիտ բնակեցված տարածքում, մայրաքաղաք Երևանից 48.0կմ. դեպի արևմուտք: Այս շրջանում հաղորդակցուղիները մեծ խտություն ունեն:

Տրանսպորտային կապերի ապահովվածության տեսանկյունից «Արմավիր-3»-ի տարածքը, Արմավիր և Մեծամոր քաղաքները վերգետնյա և օդային ուղիներով կապված են հանրապետության տարբեր մարզերի և արտասահմանյան երկրների հետ:

«Արմավիր-3»-ի սահմաններում ներկայումս գործում են մի շարք տրանսպորտային ձեռնարկություններ: Արմավիր քաղաքային համայնքի ջրամատակարարումն իրականացվում է քաղաքի գործող, օրվա կարգավորիչ ջրամբարների հարակից տարածքում իրականացված հինգ խորքային հորերից, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 21.0հազ.մ3/օր: Խորքային հորերից, պոմպերի միջոցով, ջուրն առանձին ջրագծերով մղվում է քաղաքի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների տարածքում գործող մարիչ հորը, որտեղ և կատարվում է ջրի վարակազերծում, այնուհետև ինքնահոս խողովակաշարով լցվում քաղաքի գործող կարգավորիչ ջրամբարները, որտեղից առանձին ջրատարներով տրվում է բնակավայրի ներքին բաշխիչ ցանցի օղակային հինգ գոտիներին:

Մեծամոր քաղաքի խմելու որակի ջրամատակարարումը իրականացվում է միակ խորքային հորից, որի հզորությունը 120.0մ^3/ժամ է: Խորքային հորից պոմպի միջոցով մղվում է 2x250մ^3 ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարները (ՕԿՋ, հատակի նիշը 914մ): Ջրի վարակազերծումը կատարվում է ՕԿՋ-ում, որտեղից 3.32կմ երկարության ջրագծով ջուրը տրվում է քաղաքի ներքին բաշխիչ ցանցին: Ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը 11.7կմ է:

Ներկայումս կեղտաջրերը պատշաճ մաքրման չեն ենթարկվում: Արմավիր և Մեծամոր քաղաքների կեղտաջրերը նախկինում ենթարկվում էին կենսաբանական մաքրման՝ Մեծամորից հարավ ընկած տարածքում գտնվող մաքրման կայանում: 1989թ.-ից սկսած, շուրջ 15 տարի կայանը չի գործել. բարոյապես և ֆիզիկապես շարքից դուրս է եկել և վերականգնման համար դարձել ոչ նպատակահարմար: Ըստ շահագործող կազմակերպության պահանջվում է կառուցել նոր ժամանակակից մաքրման կայան՝ հարակից տարածքում:

«Արմավիր-3»-ի, Արմավիր և Մեծամոր քաղաքների էլեկտրամատակարարման գլխավոր սնուցող ենթակայաններն են.

<<Արմավիր>> ե/կ _110/35/10 5 ՄՎԿ հզորությամբ ԿՎ լարման 2x31,

<<Ուրարտու>> ե/կ _ 110/10 ԿՎ լարման 1x25 ՄՎԱ հզորությամբ:

Էլեկտրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակը բավարար է:

Մինչև 1991թ-ը Արմավիր և Մեծամոր քաղաքներում գործում էր կենտրոնացված ջեռուցման համակարգը, բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման կարքներն ապահովվում էր երկու կենտրոնական կաթսայատներից: Ներկայումս կենտրոնացված համակարգի, նախկինում գործող ամբողջ ջերմային ցանցերն ու հանգույցները երկար տարիներ չգործելու հետևանքով քայքայվել են, շարքից դուրս են եկել և սպառել նորմատիվային ժամկետները:

Արմավիր և Մեծամոր քաղաքները և գյուղերը հիմնականում գազաֆիկացված են:

Գազամատակարարման աղբյուր է հանդիսանում <<Երևան–Գյումրի>> բարձր ճնշման գազատարը՝ 500մմ տրամագծով: Քաղաքի գազամատակարարումը իրականացվում է <<Արմավիր>> գազաբաշխիչ կայանի միջոցով: Ներկայումս քաղաքում կաթսայատները չեն գործում:

«Արմավիր-3» տարածքը, ինչպես նշված է համապատասխան բաժիններում, գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում, խիստ մայրցամաքային կլիմայով, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով: Այս ամենը չափորոշիչ է քաղաքի կանաչապատման համակարգի ձևավորման և պահպանման համար: Արմավիր քաղաքի տարածքի 56%-ից ավելին զբաղեցնում է սակավահարկ տնամերձ անհատական հողամասերով կառուցապատումը: Տնամերձ հողամասերի շուրջ 60%-ը զբաղեցված են պտղատու այգիներով և բանջարանոցներով: Գյուղական համայնքներում կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին: Մասամբ կանաչապատված են նաև հասարակական տարբեր նշանակության կազմակերպությունների հողատարածքները: Ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են ոչ մեծ հատվածներով:

Տնտեսական զարգացման համար հողատարածքն ունի իր որոշիչ նշանակությունը: Համայնքների հողային ֆոնդի առկայության համեմատական վերլուծությունը բացահայտում է գյուղատնտեսության տնտեսական զարգացման ներուժը և դրա առաջնային նախընտրելիության աստիճանը: «Արմավիր-3» գյուղական համայնքներում գերակայում են պտղատու այգիները, որոնք բազմամյա տնկարկների 65.89%-ն են կազմում, իսկ խաղողի այգիները՝ 34.10%, մեկ բնակչին ընկնող բազմամյա տնկարկները կազմում են 355.3ք.մ/մ, պտղատու այգիները՝ 234.1ք.մ/մ, իսկ խաղողի այգիները՝ 121.2ք.մ/մ: Արմավիրի մարզի ագրոկլիմայական և լանդշաֆտային պայմաններում արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքերից պետք է հաշվի առնել հատկապես վարելահողը, որը հիմք է հանդիսանում բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման համար, ինչպես նաև անասնաբուծության համար:

ՀՀ Արմավիրի մարզի արդյունաբերական արտադրության 61.3%-ը բաժին է ընկել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանը և բաշխմանը, որը մեծապես պայմանավորված է ՀԱԷԿ-ի արտադրության ծավալներով: Գյուղատնտեսության ուղղություններն են՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը:

Ներկա պայմաններում ոռոգման միջոցներ են հանդիսանում՝ խորքային հորերը և պոմպակայանները, որոնք բարոյապես և ֆիզիկապես մաշված են: Որոշ համայնքների հողատարածքները ոռոգվում են Սևան-Հրազդան համակարգից Ստորին Հրազդան ջրանցքով, Մեծամորի և Ակնալճի պոմպակայաններից, որոնք սնվում են Ակնալճից և Սև ջուր գետի գլխամասային ավազանից:

Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր առաջնահերթային միջոցառումներն են.

- ոռոգման համակարգերի գույքագրում նորոգում, պահպանում և շահագործում,
- ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում,
- էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում,
- կաթիլային ոռոգման համակարգերի կիրառում,
- ջրամբարների կառուցում, համայնքներում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի դրույթներում հանձնարարված է զսպել Արարատյան հարթավայրում գտնվող բնակավայրերի տարածական աճը: Արմավիրի

ՓՈՐՁԱՂԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

տարածաշրջանում՝ «Արմավիր-3» միկրոռեգիոնալ տարածքի բնակավայրերում, առավելապես քաղաքներում հեռանկարային զարգացման համար հիմնական խթանիչ գործոն են հանդիսանում գործող արտադրական հզորությունների տեխնոլոգիական գործընթացի արդիականացումը, շրջակա միջավայրի վնասակարության աստիճանի նվազեցումը և էներգախնայող սարքավորանքի կիրառումը:

Նոր ներդրումային հնարավորությունների առաջացման դեպքում դրանց հանրային օգտակարության և տնտեսավետության, շրջակա միջավայրի պահպանության և էներգախնայողության արմատական հիմնավորումների կատարում:

Գյուղերի գոյատևման, առաջընթացի ապահովման և զարգացման հիմնական գործոնը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով ապահովվածությունն է: Դրա հետ մեկտեղ համայնքներում գյուղատնտեսական արտադրամիջոցներով ապահովությունն է, տեխնիկական զինվածությունը: Զարգացման ուղղվածությունը նորարարական տեխնոլոգիաների, ագրոմշակույթի մակարդակի բարձրացումն է, որոգման ջրի խնայողաբար, արդյունավետ և համաչափ օգտագործումը, մշակաբույսերի պաշտպանությունը ցրտահարություններից և կարկտահարումից, գյուղական տնտեսական միավորների խոշորացումը, ներուժի խելամիտ օգտագործումը, միասնական ներդրումների և արդյունքների հասնելու պատրաստակամությունը:

Հիմնվելով ներկա իրավիճակի և նախորդ ժամանակաշրջանների ուսումնասիրության ու վերլուծության եզրահանգման վրա՝ զերծ մնալ անիրատեսական զարգացման ծրագրերի առաջադրումից՝ բնակչության թվի կտրուկ աճի, տնտեսական, այդ թվում հանքարդյունահանման ոլորտների, ինժեներական ենթակառուցվածքների կտրուկ ծավալային զարգացման և այլն: Հիմնական ուղղությունները պետք է նպատակաուղղվեն գոյություն ունեցող հզորությունների կատարելագործմանը և բարեփոխմանը, ինչի շնորհիվ կարող են նոր հիմքեր ստեղծվել հեռանկարային զարգացման տեմպերի արագացման համար:

Ըստ հիմնադրութային փաստաթղթի առաջարկվում է բնակավայրերի տարածքների մաքրության պահպանման, աղբի և թափոնների հավաքման, կուտակման և վնասազերծման արդյունավետ համակարգի և համապատասխան տեխնիկական հզորությունների ստեղծում՝ զարգացման հիմքում ընդունելով «կանաչ» և «խելամիտ» բնակավայրերի ձևավորման պայմանները:

Համայնքներում բնակչության հանրային կյանքի և ստեղծարար մթնոլորտի ձևավորման նպատակով խրախուսել և ակտիվացնել հին ու նոր ավանդույթները, տեղական, տարածաշրջանային, ժողովրդական, կրոնական և պետական տոնական միջոցառումները, մարտական հերոսների և համայնքի հասարակական կյանքում անձնական ներդրում ունեցող անձանց հիշատակման արարողությունների անցկացումը:

Բնական պայմանների և մարդու գործունեության համադրությամբ ձևավորվել է տարածական հատակագծային գոյացություն, որն իր տարածական կառուցվածքն ունի: Այն բնորոշվում է բաղադրիչների բովանդակային կազմով, տարածքներով, հեռավորություններով, հանգուցային կամ կետային և գծային տարրերով ու դրանց հատկություններով: Գծային տարրերն ունեն իրենց հանգուցային տարրերը՝ ջրընդունիչ և ջրաբաշխիչ կառույցներ, էլեկտրաենթակայաններ, տրանսֆորմատորային ենթակայաններ, գազաբաշխիչ կայաններ և այլն: Միկրոռեգիոնալ տարածքի հատակագծային կառուցվածքի ձևավորման հիմնական գործոն է նաև տարածքի բնական պայմանները՝ ռելիեֆը կամ հողի մակերևույթի ձևը, ջրաբանական ցանցը, ինչպես նաև ինժեներաերկրաբանական և սեյսմիկ պայմանները: Տարածքային զարգացման հատակագծային կազմաերպման մեջ իր կարևոր դերն ունի հողօգտագործման տարածական համակարգը:

«Արմավիր-3» տարածքի միկրոռեգիոնալ խմբավորումներում հողօգտագործման

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հեռանկարը հիմնականում պահպանում է իր ձևավորված ուղղվածությունը: Բնակավայրերի տարածքային զարգացման համար առաջին հերթին առաջարկված են այն տարածքները, որոնք համապատասխան նպատակային նշանակության հողերի կազմում իրենց նշանակությամբ չեն կարևորվում: Դրանք առաջին հերթին այլ կամ անօգտագործելի գործառական նշանակության հողերն են: Վերջինների տարածքը ընդհանուր նպատակային նշանակության պաշարում չնչին մաս է կազմում:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ ի հայտ են բերվել համընդհանուր խնդիրների համալիր, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում:

- Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, գիշերային լուսավորության համակարգի անցկացում:
- Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգում, ընդլայնում, կոյուղու համակարգի իրականացում, աղբահանության կազմակերպում:
- Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորոգումներ, տանիքների վերանորոգում, հանրային տարածքների կազմակերպում:

Արմավիր քաղաքի տարածքի 56%-ից ավելին զբաղեցնում է սակավահարկ տնամերձ անհատական հողամասերով կառուցապատումը: Տնամերձ հողամասերի շուրջ 60%-ը զբաղեցված են պտղատու այգիներով և բանջարանոցներով: Գյուղական համայնքներում կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին: Մասամբ կանաչապատված են նաև հասարակական տարբեր նշանակության կազմակերպությունների հողատարածքները: Ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են ոչ մեծ հատվածներով:

«Արմավիր-3»-ի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 16 գերեզմանոց, որոնք գործող են, իսկ ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 35.0հա:

Արմավիր և Մեծամոր քաղաքներում գործում է 6 գերեզմանոց: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում:

Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

«Արմավիր-3» համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարաններում;
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը;
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում:

Արմավիր քաղաքում կանաչ տարածքների չափը ներկա իրավիճակում չի համապատասխանում գործող նորմերին (1 բնակչին՝ 8.0մ² ընդհանուր օգտագործման կանաչ, տես ՀՀՇՆ 30-01-2014 Աղյուսակ 13): 37.489 հազ. բնակչով քաղաքում կա ընդամենը 16.04հա հասարակական կանաչ 30.0հա-ի փոխարեն:

Արմավիր քաղաքի հեռանկարային բնակչության համար ըստ գործող նորմերի պահանջվում է 66.3հա կանաչ, որից 35.7հա ընդհանուր օգտագործման կանաչ: Նախատեսված են քաղաքային այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ: Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում: Սույն մշակումների շրջանակներում Արմավիր քաղաքի տարածքային զարգացման ժամկետում բնակչության հեռանկարային, հաշվարկային թիվը ընդունված է 38.5 հազար մարդ: Դրանից ելնելով ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքի չափը պետք է լինի 26.95հա:

Մեծամոր քաղաքի բնակչության հաշվարկային թիվը ընդունված է 13.0 հազար մարդ: Քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչապատման տարածքը առկա վիճակում կազմում է 18.9հա, որի մեկ բնակչին հասնող բաժինը կազմում է 14.5մ²/մարդ:

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհամենը կազմում են 53.92հա: Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56:

Հեռանկարում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 68.64հա:

Տարածքային զարգացման հատակագծային կազմակերպում բաժնում գոյություն ունեցող վիճակի վերլուծության հիման վրա տրված է հատակագծատարածական կառուցվածքի, ճանապարհային ցանցի և ինժեներական ենթակառուցվածքների բարելավման ու կատարելագործման ուղղությամբ հեռանկարային առաջարկությունների համակարգ: Առանձին ներկայացված են հողօգտագործման, բնակարանային ֆոնդի, հասարակական սպասարկման համակարգի, ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղի) և ոռոգման, գազամատակարարման կատարելագործման նկատառումներ՝ համապատասխան հիմնավորումներով:

Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները, որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման նպատակով:

Հիմնադրույթային փաստաթղթում ներկայացվել է նաև գոտևորման նախագիծը, որտեղ ամրագրված են հողատեսքերի գործառական նշանակություններով պայմանավորված գոտիները՝ իրենց հապավումներով, դրանց օգտագործման չափորոշիչների համալիրը:

Հիմք ընդունելով առկա վիճակի վերլուծությունը և ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը կարող ենք նախանշել, որ «Արմավիր-3» զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում;
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում;
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում;

- գետ թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում:
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում;
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում;
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում(սպանդանոցի կառուցում);
- հեղեղապաշտպան /տարափապաշտպան/ ծառատնկումների իրականացում
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում,աղբամշակման գործարանի կառուցում;
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ;
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;
- Արմավիր և Մեծամոր քաղաքներում եռամսյակը մեկ շրջակա միջավայրի (օդ, ջուր,հող) մոնիտորինգի կազմակերպում;
- անցնել ջեռուցման նոր տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները տարեկան 218 տոնայով;
- անցնել աղբի տեսակավորման;
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմամբ, անասնապահության, հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում դեպքում, տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

Միջոցառումները կտեղայնացվեն մարզի տարբեր տարածաշրջաններում առկա ներուժին և զարգացման հեռանկարներին համապատասխան:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

«Արմավիր-3»-ի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակով:

Պատճառաբանական մաս: Ամփոփելով հիմնադրույթային փաստաթղթի լուծումների արդյունավետությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

ԱՐՄԱՎԻՐ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՁԵՎ 3)				
Տարածքը (ընդամենը),այդ թվում՝	հա	11664.47	11664.47	11664.47
գյուղատնտեսական նշանակության հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողատեսքեր)	հա	8104.22	8073.95	8065.97
բնակավայրերի հողեր	հա	2321.21	2352.21	2362.30
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հա	280.28	279.00	276.82
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	հա	561.77	562.50	562.57
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	141.40	141.22	141.22
հատուկ նշանակության հողեր	հա	132.81	132.81	132.81
անտառային հողեր	հա	6.57	6.57	6.57
ջրային հողեր	հա	116.21	116.21	116.21
պահուստային հողեր	հա	0.00	0.00	0.00

«Արմավիր-3» (ՄՄՀՏՊՓ) միկրոռեգիոնի բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել է առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը, նպաստելու է տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է

օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի «Արմավիր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ Յու. Մատինյան